ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017
10-րդ դասարան
Տևողությունը 150 րոպե

Ա. Աշխատանք բնագրով:

Հայոց հազարամյա մշակույթի պատմությունն ունի մի շրջան, որը վայրէջքների ու դժվարին վերելքի իր դասերով ներկայացնում է մեր անշեջ փառքի փայլուն ապացույցներից մեկը:Թաթար-մոնղոլական տիրապետության շրջանն էր դա,երբ անապատի ժանտ զավակները , որդեգրելով իսլամի անողորմ վարդապետությունը, անխնա ոչնչացնում էին քրիստոնյա իշխանությունները ՝ հրո ճարակ դարձնելով նախընթաց քաղաքակրթության գանձերն ու գոյության հիմքերը: Անօրեն բռնակալների անլուր հալածանքների պայմաններում հայոց մշակութային կյանքը տվել է վերընթաց զարգացման շատ երևույթներ, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Գլաձորի համալսարանը: Այնտեղ էին ընդունվում միջնակարգ կրթություն ստացած լավագույն երիտասարդները , որոնք վեց-յոթ տարվա դասընթացներն ավարտելուց հետո քննաճառեր էին պաշտպանում գիտական ատյանի առաջ՝ ստանալով վարդապետի աստիճան:Այստեղ ստեղծված դասագրքերը, հատկապես Եսայի Նչեցի Եռամեծ վարդապետի քերականությունն անքննելի հեղինակություններ էին ժամանակի դպրոցներում: Գլաձորում ստեղծված ձեռագրերն իրենց գրչական և մանրանկարչական արժանիքներով բարձր աստիճան էին մեր բազմադարյա մշակութային կյանքում:

1.Գրե՛ք՝ ինչ գիտեք Գլաձոր համալսարանի մասին: Ո՞ր դարերի կրթօջախ է: Ովքե՞ր են առաջին հիմնադիրները:Գրե՛ք Գլաձոր համալսարանին վերաբերող շրջասություններ: **(4 միավոր)**

2.Տեքստից դու՛րս գրեք այն բառերը, որոնք իրենց մեջ պարունակում են **տարի և գրագիր** բառերի հոմանիշները: Այդ արմատով գրե՛ք առնվազն երկու բառ:
(1.5 միավոր)

3.Տեքստից դո՛ւրս գրեք այն բառը, որը **կիզել** բառի արմատի հոմանիշն է: Այդ արմատով գրե՛ք առնվազն երեք բառ: **(1.5 միավոր)**

4.Գրե՛ք **վարդապետություն, ատյան, անլուր** բառերի երկու հոմանիշ: Բացատրե՛ք՝ ինչ իմաստով են դրանք գործածված տեքստում: **(1.5 միավոր)**

5.Տեքստից դո՛ւրս գրեք **անօրեն** բառի հոմանիշները: **(1 միավոր)**

6.Բացատրե՛ք **հրո ճարակ** արտահայտության իմաստը: Գրե՛ք **ճարակ** և **գանձ** բառերի համանունական շարքերը և բացատրե՛ք իմաստները: **(2.5 միավոր)**

7.Տեքստից դո՛ւրս գրեք մեկական համաձանցավոր, վարջաձանցավոր, նախաձանցավոր, բարդաձանցավոր բառ՝ նշելով բաղադրիչների արժեքը: (2միավոր)

8.Տեքստից դու՛րս գրեք այն նախադասությունը, որն իր կազմում ունի միջադաս դերբայական դարձված: Ընդգծե՛ք այն: **(1 միավոր)**

Բ. Շարադրություն՝ «Անմնացորդ նվիրվածություն» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)